ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Սարչապետ համայնք, գ. Սարչապետ,
Հեռ. (077)867459 , sarchapet.lori@mta.gov.am

N 28-18
26 հունվար 2018թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից Ձեզ եմ ներկայացնում Սարչապետ համայնքի ավագանու 15.01.2018 թվականի թիվ 03-Ա որոշումը, համայքի ղեկավարի 15.01.2018 թ. թիվ 20-Ա, 26.01.2018 թ.21-Ա և 22-Ա որոշումները, համայնքի ղեկավարի 16.01.2018 թ. թիվ 27 և 28 կարգադրությունները:

Առդիր՝ 6 թերթ:

Համայնքի ղեկավար՝ **Բորիս Բարոյան**

Կատ. '

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈՒՆՎԱՐԻ 2018թվականի N-03-Ա

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի <ՍԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ> ԹԻՎ 06-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Սարչապետ համայնքի ավագանու 2017թ. նոյեմբերի 24-ի <<Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 06-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացում՝ որոշման հավելվածում՝
1) <<Աշխատակիցների թվաքանակը>> բառերից հետո <<34>> թիվը փոխել <<35>> թվով,
2) 7-րդ տողի <<Հաստիքային միավորը>> սյունակի <<1>> թիվը փոխել <<2>> թվով,
3) 16-րդ տողի <Հաստիքային միավորը> սյունակի <<3>> թիվը փոխել <<2>> թվով,
4) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 18-րդ տող՝

18.	Բանվոր	1	94 000

5) <<Ընդամենը հաստիքային միավոր >> բառերից հետո <<33>> թիվը փոխել <<34>> թվով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ
2. ԱՎԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ
4. ԳԻՆՈՅԱՆ ՄԿՐՏԻՉ
5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԳԱՐ
6. ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ
7. ՄԽՈՅԱՆ ՀԱՎԵՆ
8. ՏՈՄԵՅԱՆ ՀՈՎԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈՒՆՎԱՐԻ 2018թվականի N 20

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ, ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն <Բյուջետային համակարգի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի և առաջնորդվելով Սարչապետ համայնքի ավագանու 15 հունվարի 2018 թվականի <<Սարչապետ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 29-ի <Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին> թիվ 13-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> թիվ 04-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Հաստատել Սարչապետ համայնքի 2018 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը /հավելված 1,2/:

Համայնքի ղեկավար՝ **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

2018 թ. հունվար 15
գ.Սարչապետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈՒՆՎԱՐԻ 2018թվականի N 21

ՀԻՄՔԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22 կետով, ՀՀ ՀՕ 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 60-րդ և 64-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի թիվ ԼԴ3/0614/02/17 վճիռը կայացած 16.11.2017թ., <Մել> և <Միլ> գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագիծը և Գարիկ Զավենի Ավետիսյանի անձնական դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Օրենքի ուժով 06-092-0010-0001 ծածկագրի տակ գտնվող հողամասից 0.2736 հա փաստացի օգտագործվող հողամասի նկատմամբ ճանաչել Գարիկ Զավենի Ավետիսյանի սեփականության իրավունքը:

2. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և (կամ) չի առաջացնում սերվիտուտ:

3.Վերականգնել և ճանաչել 0.2736 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողամասում գտնվող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, անձանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 418.54 քմ մակերեսով շինությունների նկատմամբ Գարիկ Զավենի Ավետիսյանի սեփականության իրավունքը համաձայն <ՄԵԼ ԵՎ ՄԻԼ> ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

5. Հաստատել վերը նշված անշարժ գույքի փոստային հասցեն. Սարչապետ համայնք գյուղ Պրիվոլնոյե 2-րդ փողոց թիվ 92 :

6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանում:

Համայնքի ղեկավար՝ **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

2018 թ. հունվարի 26
գ.Սարչապետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈՒՆՎԱՐԻ 2018թվականի N 22

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՆՈՒՇ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Անուշ Մկրտչյանի 2018 թվականի հունվարի 19-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և ՀՀ կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Սարչապետ համայնքի Պետրովկա բնակավայրի փ.1, նրբ.1, տ.1 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Անուշ Մկրտչյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

2018 թ. հունվար 26
գ.Սարչապետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2018թվականի N 27

ՋԻՎԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ և 99-րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով և հաշվի առնելով Ջիվան Աբրահամյանի անձնական դիմումը՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ.

1. Ջիվան Աբրահամյանին ընդունել համատեղությամբ աշխատանքի և նշանակել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքի ղեկավարի օգնականի պաշտոնում:

2. Ջիվան Աբրահամյանի պաշտոնային դրույքաչափը սահմանել համաձայն հաստատված հաստիքացուցակի՝ 140 000 (մեկ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ:

3. Ջիվան Աբրահամյանի հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:

4. Ջիվան Աբրահամյանին անցնել պարտականությունների կատարմանը 2018թ. հունվարի 16-ից:

Համայնքի ղեկավար՝ **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

2018 թ. հունվար 16
գ.Սարչապետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2018թվականի N 28

ԳՈՒՐԵՆԻԿ ՄԽՈՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ և 99-րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով և հաշվի առնելով Գուրենիկ Մխոյանի անձնական դիմումը՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ.

1. Գուրենիկ Մխոյանին ընդունել համատեղությամբ աշխատանքի Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմում որպես էլեկտրիկ:

2. Գուրենիկ Մխոյանի պաշտոնային դրույքաչափը սահմանել համաձայն հաստատված հաստիքացուցակի՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

3. Գուրենիկ Մխոյանի հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:

4. Գուրենիկ Մխոյանին անցնել պարտականությունների կատարմանը 2018թ. հունվարի 16-ից:

Համայնքի ղեկավար՝ **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

2018 թ. հունվար 16
գ.Սարչապետ